

5.11. Արտակարգ իրավիճակները 2000 թվականին

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչության ամփոփ տվյալների, 2000թ. գրանցվել է 244 արտակարգ իրավիճակի դեպք: Աղետների հետևանքով տուժել են 343 մարդ, նրանցից 108-ը զոհվել են, 161-ը՝ վիրավորվել, 74-ը՝ ժամանակավորապես տարահանվել:

Արտակարգ իրավիճակների դեպքերի 34.8%-ը բաժին է ընկել տարերային աղետներին, որոնց հետևանքով տուժել են 24 մարդ (4 զոհ, 20 վիրավոր):

Տարերային աղետների քանակը և տուժածների թվաքանակը

	Գրանցված աղետների քանակը	Տուժված մարդկանց թվաքանակը, մարդ		
		ընդամենը	նրանցից	
			զոհվել են	վիրավորվել են
Տարերային աղետներ, ընդամենը այդ թվում	85	24	4	20
ուժեղ քամիներ, փոթորիկներ, մրրիկներ, պտտահողմեր, փոշեփոթորիկներ	11	-	-	-
ամպրոպ, մառախուղ, կայծակ, տեղատարափ անձրև, կարկուտ սողանքներ	10	3	1	2
սելավներ	2	-	-	-
սելավներ	1	-	-	-
ծյան առատ տեղումներ, բուք, ձյունահողմեր, ձյունահյուսքեր, սառնամանիք, մերկասառույց	12	-	-	-
անտառային և տորֆային հրդեհներ	2	-	-	-
ուժեղ շոգ, երաշտներ, տոթահողմեր	1	-	-	-
ցրտահարություն վեգետացիոն շրջանում	1	-	-	-
գետերի վարարումներ և ջրհեղեղներ	1	-	-	-
փլվածքներ (քարաթափվածքներ)	2	-	-	-
էպիզոտիա (անասնահամաճարակ)	4	-	-	-
երկրաշարժեր	32	3	1	2
այլ աղետներ	6	18	2	16

Արտակարգ իրավիճակների դեպքերի 65.2%-ը բաժին է ընկնում տեխնածին աղետներին, որոնց հետևանքով տուժել են 319 մարդ (104 զոհ, 141 վիրավոր, 74 ժամանակավորապես տարահանված):

Տեխնածին աղետների քանակը և տուժածների թվաքանակը

	Գրանցված աղետների քանակը	Տուժված մարդկանց թվաքանակը, մարդ			
		ընդամենը	նրանցից		
			զոհվել են	վիրավորվել են	ժամանակավորապես տարահանվել են
Տեխնածին աղետներ, ընդամենը այդ թվում	159	319	104	141	74
ավտոճանապարհային վթարներ	21	131	30	101	-
վթարներ մագիստրալային խողովակաշարերում	4	-	-	-	-
վթարներ հիդրոտեխնիկական կառուցվածքներում	1	-	-	-	-
կառուցվածքների հանկարծակի փլուզումներ, պայթյուններ	12	92	6	12	74

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԱԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	Գրանցված աղետների քանակը	Տուժված մարդկանց թվաքանակը, մարդ			
		ընդամենը	նրանցից		
			զոհվել են	վիրավորվել են	ժամանակավորապես տարահանվել են
այլ վթարային իրավիճակներ, որոնք ուղեկցվել են ճառագայթման աղբյուրների, պայթուցիկ սարքերի և այլնի հայտնաբերումով	13	1	-	1	-
դժբախտ պատահարներ, քրեական դեպքեր	43	72	56	16	
սահմանային ընդհարումներ	3	10	8	2	-
հրդեհներ	62	13	4	9	

2000թ. ընթացքում արտակարգ իրավիճակների վերացման աշխատանքների իրականացման նպատակով պատրաստվել (վերապատրաստվել) և ուսուցանվել են 2373 մասնագետներ ու քաղաքացիներ, որոնց 87.4%-ը կամ 2073-ը արտակարգ իրավիճակների վերացման համակարգի մասնագետներ են:

Ըստ ՀՀ հիդրոտեղեկության վարչության տվյալների, 2000թ. հուլիս-օգոստոս ամիսներին արձանագրված ուժեղ շոգի և երաշտի պատճառած վնասը գնահատվել է 110 մլն. ԱՄՆ դոլար: